

ՀՀ Մարդու իրավունքների  
պաշտպանի զեկույցը  
ՄԱԿ-ի երեխաների իրավունքների  
կոմիտեին



## Հապավումների ցանկ

### ՄԻՊ-Մարդու իրավունքների պաշտպան

ՄԱԿ-Միավորված ազգերի կազմակերպություն

ԴԱՀԿ- Դատական ակտերի հարկադիր կատարման

ԱՕԽ-Առանց ծնողական խնամքի մնացած երեխա

ՔԿԱ -Քաղաքացիական կացության ակտերի մասին

ԿԶԾ-Կայուն զարգացման ծրագիր

ԵԻԿ-Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

ԳԱԾ-Գործողությունների ազգային ծրագիր

### Բովանդակություն

#### Ներածություն

1. Իրականացմանն ուղղված ընդհանուր քայլեր
  - Օրենսդրություն
  - Համակարգում
  - Անկախ մոնիթորինգ իրականացնող կառույցներ
  - Գործողությունների ազգային պլան
2. Երեխայի սահմանումը
3. Ընդհանուր սկզբունքներ.
  - Խտրականության բացառում
4. Քաղաքացիական իրավունքներ և ազատություններ
  - Ծնունդների գրանցում և ազգություն
5. Ընտանեկան միջավայր և այլընտրանքային խնամք
  - Այլընտրանքային խնամք
  - Որդեգրում
6. Հիմնական առողջական և բարօրության ծառայություններ
  - Սոցիալական ապահովություն և երեխայի խնամքի ծառայություններ և հիմնարկներ/կյանքի ստանդարտ
7. Կրթություն, հանգիստ և մշակութային միջոցառումներ
  - Կրթության իրավունքն ու նպաստակները
8. Հատուկ պաշտպանության միջոցներ
  - Տնտեսական շահագործում
  - Անչափահասների արդարադատության իրականացումը

## Ներածություն

Ժամանակակից պետությունների առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկը երեխայի իրավունքների պաշտպանությունն է: Հայաստանը Երեխաների իրավունքների կոնվենցիային անդամակալեց 1992թ.ին, իսկ 1996թ.ին ընդունեց Օրենք երեխաների մասին, որով ամրապնդվեցին ԵԻԿ-ի հռչակած դրույթները: Անցած տարիների ընթացքում Հայաստանը վավերացրել է այլ կարևոր միջազգային փաստաթղթեր ևս, որոնց թվում են ԵԻԿ-ի երկու կամընտիր արձանագրությունները երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի մասին և Զինված բախման մեջ երեխաների մասնակցության մասին (2005թ.), Աշխատանքի միջազգային կազմակերպության 182-րդ կոնվենցիան երեխաների աշխատանքի մասին (2005թ.), Հաագայի կոնվենցիան միջազգային որդեգրման մասին (2005թ.), ինչպես նաև փոփոխություններ է կատարել երկրի այնպիսի կարևոր օրենքներում, ինչպիսիք են Ընտանեկան օրենսդրությունը, Աշխատանքային և Քրեական օրենսգրքերը, նպատակ ունենալով ապահովել երեխաների առավել լավ պաշտպանությունը շահագործումից և թրաֆիքինգից:

ՀՀ-ն, վավերացնելով Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան, դրանով իսկ ընդունեց, որ երեխաներն իրենց տարիքային, մտավոր և ֆիզիկական զարգացվածության մակարդակի ուժով համարվում են խոցելի հատուկ խումբ և կարիք ունեն մշտական հոգատարության ու պաշտպանության:

Այս զեկույցը պատրաստվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ Հայաստանի Հանրապետության կողմից Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ և ներկայացվում է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեին: Զեկույցի պատրաստման ընթացքում հաշվի են առնվել ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի փետրվարին ներկայացված 3 և 4 պարբերական զեկույցները, ինչպես նաև ՀԿ-ների կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցը:

Զեկույցում ներկայացված տեղեկատվությունը չի կրկնում ՀՀ կառավարության, ինչպես նաև ՀԿ-ների կողմից ներկայացված զեկույցներում նշված տեղեկատվությունը:

## 1. Իրականացմանն ուղղված ընդհանուր քայլեր

### Օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Կոնվենցիայից բխող մի շարք պարտականություններ, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության բարեփոխումների իրականացման և միջազգային չափանիշներին նրա համապատասխանեցմանն ուղղությամբ: Սակայն պետության ներդրած ջանքերը բավարար չեն եղել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերացման համար: Առ այսօր ներպետական օրենսդրության մեջ առկա են բացեր, իրավակիրառ պրակտիկայի թերություններ, որոնք գործնականում ստեղծում են խոչընդոտներ երեխաների իրավունքների պաշտպանության իրականացման համար: Օրինակ, որոշ դեպքերում Դատական ակտերի հարկադիր կատարման (այսուհետ՝ ԴԱՀԿ) ծառայության աշխատակիցների կողմից խախտվում են պահանջատիրոջ իրավունքները, ինչի հետևանքով շարունակվում են չկատարվել կամ ոչ լիարժեքորեն կատարվել դատարանների կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած ակտերի պահանջները: Մասնավորապես, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հաճախ է ստանում դիմում-բողոքներ առ այն, որ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որով երեխայի խնամքը հանձնվում է ծնողներից մեկին կամ երրորդ անձի, սակայն իրավասու մարմինը չի ձեռնարկում համապատասխան քայլեր այդ վճիռն ի կատար ածելուն ուղղված: Արդյունքում երեխայի խնամքը վճռով հանձնվում է մեկին, սակայն երեխան փաստացի շարունակում է բնակվել մյուս ծնողի կամ երրորդ անձի մոտ: Հաճախ լինում են դեպքեր, երբ այդ ծնողը կամ երրորդ անձը ինքն է ստեղծում խոչընդոտներ վճռի կատարման համար: ԴԱՀԿ-ն նման դեպքերում վկայակոչում է այն իրողությունը, որ երեխան իրականում չի ցանկանում լինել այն անձի մոտ, ում վճռով հանձնվել է խնամքը: Նման իրավիճակներում ԴԱՀԿ ծառայությունը, ավարտելով վարույթը, հիմքում դնում է վճռի կատարման անհնարինությունը:

Մեկ այլ խնդիր է իրենից ներկայացնում ալիմենտի բռնագանձման հարցը, երբ դատական ակտով ալիմենտ վճարելու պարտավորություն է դրվում ծնողի վրա, բայց վերջինս չի ունենում եկամտի աղբյուր, ինչի հետևանքով էլ դարձյալ առաջանում է վճռի կատարման անհնարինություն և երեխան զրկվում է կենսական անհրաժեշտություն ունեցող ալիմենտից:

### **Առաջարկություններ.**

- ✓ ԴԱՀԿ աշխատակիցների հատուկ վերապատրաստում այն գործերով, որոնք վերաբերում են երեխաներին:
- ✓ Սոցիալական աշխատողի և հոգեբանի պարտադիր ներգրավում ԴԱՀԿ ծառայության կողմից այն վճիռների կատարման ժամանակ, որոնք վերաբերվում են երեխաներին:
- ✓ Ստեղծել պետական ալիմենտային ֆոնդ: Ալիմենտային պարտավորություն կրող կողմի անվճարունակ լինելու դեպքում վճարումները կկատարվեն այդ ֆոնդից:

## Համակարգում

ՀՀ-ում 2005-2006թթ. ներդրվել է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որը բաղկացած է Ազգային հանձնաժողովից (ազգային մակարդակ), մարզպետարաններում գործող Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարզային բաժիններից (մարզային մակարդակ) և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ Խնամակալության և հոգաբարձության մարմիններից (համայնքի ղեկավար), որոնց կից գործում են համապատասխան հանձնաժողովները:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները կամ նրանց կից հանձնաժողովները ՀՀ-ում միակն են, որոնք համայնքներում իրականացնում են անմիջական աշխատանք ընտանիքների, մասնավորապես՝ երեխայի իրավունքների ու շահերի առարկայական պաշտպանության ուղղությամբ: ՀՀ կառավարության 24.02.2011 թվականի թիվ 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով, իսկ սոցիալական աշխատողի ներգրավումն այս հանձնաժողովի կազմում կրում է հայեցողական բնույթ: Միևնույն ժամանակ պետության կողմից այս մարմինների վրա դրված են չորս տասնյակից ավելի երեխայի բարեկեցության համար ծայրահեղ կարևոր նշանակություն ունեցող գործառույթներ և խնդիրներ, որոնց անգամ մակերեսային իրականացումը պահանջում է նեղ մասնագիտական կարողություններ և համապատասխան ռեսուրսներ:

Երեխայի խնամակալության վերաբերյալ յուրաքանչյուր գործով խնամակալության և հոգաբարձության մամինը դատարան է ներկայացնում իր եզրակացությունը՝ կապված հարցի լուծման հետ, որը պետք է կազմվի ծնողներից երկուսի առողջական, սոցիալական, բարոյական հատկանիշների մանրամասն ուսումնասիրության արդյունքում: Սակայն գործնականում, եզրակացությունների կայացման ժամանակ, խորհուրդները հիմնականում առաջնորդվում են իրենց սոցիալական փորձով, սեփական հայացքներով, ինտուիցիայով: Այնպիսի իրավասությունների իրականացումը, ինչպիսիք են օրինակ 14 տարին չլրացած անչափահասների, հոգեկան խանգարումների պատճառով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալության, իսկ 14-18 տարեկան անչափահաս երեխաների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ հոգաբարձություն նշանակելը, երեխայի դաստիարակությանը հավակնող անձի կյանքի պայմանների հետազոտության իրականացումը և հետազոտության ակտի ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացության ներկայացումը դատարան, խնամատար ծնողների նկատմամբ վերահսկողության իրականացումը պահանջում են խիստ մասնագիտական մոտեցում, յուրաքանչյուր դեպքում իրավիճակի խորը վերլուծություն ոչ միայն սեփական հայացքների և համոզմունքների համաձայն, այլև հստակ սահմանված չափորոշիչների և մեթոդների կիրառմամբ: Այս առումով շատ կարևոր է խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը, նրանց մոտ բավարար տեղեկատվության առկայությունը, երեխաների և ծնողների հետ շփման մի շարք հմտությունների զարգացումը: Որդեգրման բազմաթիվ ձախողված դեպքերի վերլուծությունները վկայում են այն մասին, որ նման գործընթացներում եզրակացությունները հիշյալ մարմինների կողմից տրվել են միայն որդեգրողների նյութական

հնարավորությունները հաշվի առնելու արդյունքում և անտեսվել են հոգեբանական մի շարք կարևոր հանգամանքներ:

Անհրաժեշտ է նաև ապահովել խնամակալության և հոգաբարձության մարմինների ակտիվ մասնակցությունը անչափահասների շրջանում հանցավորության դեմ պայքարին: Վերջիններիս միջամտությունը թերևս պետք է դրսևորվի որպես սոցիալական աշխատողի գործունեության իրականացում: Խոսելով խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության մեջ առկա թերությունների պատճառների մասին՝ պետք է նշել մեկ հանգամանք ևս. ՀՀ կառավարությունը 2011թ. փետրվարի 24-ին ընդունված թիվ 164 Ն որոշմամբ սահմանված կանոնադրության 10-րդ կետի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան: Այսինքն՝ հանձնաժողովը կարող է ազատորեն լուծել ոչ միայն իր կազմակերպական կառուցվածքին և մասնագետներ ընդգրկելուն վերաբերող հարցերը, այլև կամայական մոտեցում ցուցաբերել երեխաների համար մի շարք բախտորոշ հարցերին: Հետևաբար բազմաթիվ խնդիրներից, երեխաների իրավունքների խախտումներից և շահերի անտեսումից խուսափելու համար անհրաժեշտ է օրենսդրական ձևակերպում տալ վերոնշյալ հարցերին և օրենքով կարգավորել երեխայի դաստիարակության, տեսակցության հարցերը, դրանց իրականացման կարգը և այլն: Այստեղ պետության խնդիրն է ապահովել երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների աշխատանքների համակարգվածությունը և արդյունավետ միջոցներ ձեռնարկել գործառույթների ձևական թերի իրականացումը արդյունավետ իրականացման վերափոխելու ուղղությամբ:

Հայաստանում առհասարակ չի վարվում պաշտոնական վիճակագրություն այլընտրանքային խնամքի վերաբերյալ: Խնամքի հանձնելու ընթացակարգերը ևս լավ մշակված չեն. խնամքի հանձնելուց առաջ համապարփակ նախնական գնահատում չի կատարվում և հետագա վերահսկողություն չի իրականացվում: Ընտանեկան խնամքից զրկված երեխային տրամադրվող օժանդակությունը որոշվում է պատահական հիմունքներով՝ կախված խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումից, որն ի դեպ, չունի որոշման ընդունման հստակ չափորոշիչներ և որոշում ընդունելիս հիմնականում առաջնորդվում է սուբյեկտիվ գործոններով: Իսկ խնամակալության կամ հոգաբարձության հանձնելուց հետո գործնականում հսկողություն չի իրականացվում, ստուգելու համար, թե արդյոք երեխայի շահերից է բխում խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվելը: Այժմ մանկատներում երեխաների ընդգրկվածության թիվը նվազում է, սակայն սա առավել պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ երեխաները վերադառնում են ընտանիք, այլ նրանով, որ տեղի է ունենում երեխաների թվի մեխանիկական նվազում նորերին չընդունելու հաշվին:

<<World Vision International>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի և 45 հասարակական կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ այսօր Հայաստանում գոյություն չունեն դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների բացահայտման մեխանիզմներ (ՄԵՊԲ-ները, որոնք կոչված են իրականացնելու ուղղորդման գործառույթը, ունեն սահմանափակ մարդկային և նյութական ռեսուրսներ) և նման երեխաների համար գործում են սակավաթիվ հաստատություններ՝ գիշերային խնամքի կենտրոններ, ցերեկային կենտրոն, խնամքի կենտրոններ և այլն: Խնդիր է նաև այն, որ նախականիման,

կանխարգելման և վաղ միջամտության իրավիճակների համար նախատեսված են միայն ցերեկային կենտրոններ, ինչի հետևանքով էլ ծառայությունների քարտեզագրումը շատ թույլ է, բացի այդ՝ ծառայությունները անհամաչափ են բաշխված ՀՀ տարածքում և համապետական ծածկույթ չեն ապահովում:

### **Առաջարկություններ.**

- ✓ Համայնքներում ստեղծել երեխաների հետ աշխատող սոցիալական աշխատողների կամ այլ մասնագետների ցանց, հիմնական այն շեշտադրմամբ, որ յուրաքանչյուր համայնքում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատող սոցաշխատողներն ու մասնագետները ստանան բավարար միջոցներ՝ իրենց պարտականությունները հնարավորինս արդյունավետ կատարելու համար:
- ✓ Սահմանել ԱԾԽ մնացած երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարմինների լիազորությունների շրջանակը, փոխհամագործակցության ձևերը և մակարդակը՝ ի նպաստ համակարգի ամբողջացմանը, աշխատանքների ավելի արդյունավետ կոորդինացմանը, ավելորդ կրկնողությունների վերացմանը, յուրաքանչյուր մարմնի մասնագիտական ռեսուրսների ուժեղացմանը:
- ✓ Անհրաժեշտ է վերանայել ներպետական օրենսդրությամբ ամրագրված «Առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության սահմանումը, ինչպես նաև հստակ սահմանել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ տալու չափորոշիչները:
- ✓ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

### **Անկախ մոնիթորինգ իրականացնող կառույցներ**

Երեխաների իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտողություններում 2004թ.-ին Հայաստանի Հանրապետությանը հանձնարարել է <<... ստեղծել մի առանձին մարմին, որը պատասխանատու կլինի երեխաների իրավունքների պաշտպանության համար կամ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հատուկ մի բաժին, որը պատասխանատու լինի այդ հարցերի համար>>:

ՀՀ-ը միայն 2012թ. բյուջեի քննարկման ժամանակ անդրադարձ կատարեց վերոնշյալ դիտողությանը՝ պետական բյուջեով նախատեսելով երեխաների իրավապաշտպանի մեկ հաստիք ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում: Ողջամտորեն ենթադրվում է, որ ստեղծված այդ մեկ հաստիքի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող լիարժեք աշխատել որպես անկախ և արդյունավետ ազգային ինստիտուտ: Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն, կամ կապված է այնպիսի անձանց շահերի

պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները: Պաշտպանի այս իրավասությունը երաշխիք կարող է հանդիսանալ այլընտրանքային խնամքի և երեխաներ ունեցող այլ հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանության և իրականացման նկատմամբ մոնիտորինգ իրականացնելու համար, իսկ անարգել այցելությունների շնորհիվ նման հաստատությունների ղեկավարները և աշխատակիցներն ավելի աչալուրջ կմոտենան իրենց վրա դրված պարտականությունների կատարմանը: Մա մի ծավալուն գործընթաց է, որի իրականացման համար անհրաժեշտ են մարդկային ռեսուրսներ: Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հզորացման համար անհրաժեշտություն է նաև, որ այդ բաժնի կողմից իրականացվի Երեխաների իրավունքների կոնվենցիայի դրույթների կիրառման նկատմամբ մոնիտորինգ, օրենսդրական բարեփոխումների նախաձեռնությամբ հանդես գալ երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրության զարգացման և միջազգային լավագույն փորձի ներդրման համար: Այսպիսով, ամփոփելով պետք է նշել, որ երեխաների իրավունքների պաշտպանության ստորաբաժանման զարգացումը կարող է երաշխիք հանդիսանալ մարդու իրավունքների պաշտանի կողմից այս ոլորտում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար, որը հիմնված կլինի անկախության, ինքնավարության, անկողմնակալության, թափանցիկության, արդարության, հավասարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա: Այն կիրառործվի հանրային մարմինների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով՝ ինֆորմացիայի և լավագույն փորձի փոխանակման, համապատասխան ոլորտի միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից աջակցություն ստանալու ճանապարհով:

### **Առաջարկություններ.**

✓ Մեծացնել ՄԻՊ գրասենյակի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին տրամադրվող ֆինանսական ռեսուրսները՝ բաժնի կարողությունների հզորացման նպատակով:

### **Գործողությունների ազգային պլան**

2003 թ. ընդունվել է Երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագիրը («2003 թ. ազգային ծրագիր»), որը պետք է իրականացվի 2004-2015 թթ.: Ծրագրի մոնիթորինգային տվյալները ցույց են տալիս, որ հաստատությունների բեռնաթափման և խնամատար ընտանիքի համակարգի հաստատմանն ուղղված միջոցառումների իրականացումը դանդաղ և հակասական ընթացք է ունեցել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշմանդամ երեխաների զգալի մասը դեռևս չեն ստանում վաղ միջամտության ծառայություններ կամ ներգրավվում ներառական ծրագրերում: Մարզերի գրեթե կեսում երեխայի պաշտպանության նախաձեռնությունները դեռևս առանձնապես նկատելի չեն: Առկա է անբավարար տնտեսական աջակցություն խոցելի ընտանիքների, ինչպես նաև երեխաների պաշտպանության համակարգի համար ամբողջությամբ վերցրած, երեխայի պաշտպանության քաղաքականության և երկարաժամկետ ռազմավարական պլանավորման որոշ թույլ կողմեր, ինչպես նաև կիրառման, մոնիթորինգի և գնահատման թերզարգացած մեխանիզմներ: Բացակայում են



ինստիտուցիոնալ, համայնքային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում խոցելի երեխաների և նրանց ընտանիքների, նրանց տնտեսական վիճակի, զբաղվածության, սոցիալական, կրթական, առողջապահական և զարգացման համար անհրաժեշտ ակտիվների ու ռիսկերի վերաբերյալ տվյալների համակարգային հավաքագրման, փաստաթղթավորման, փոխանակման և տարածման մեխանիզմները: Ինչպես նաև առկա են տարբեր շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության և համագործակցության բացեր՝ լինեն դրանք քաղաքականություն մշակողներ, վարչական աշխատողներ, թե ծառայություն մատուցողներ: Երեխաների պաշտպանության հետ կապված իրազեկությունը, գիտելիքներն ու հմտությունները որոշ մարզերի Երեխաների պաշտպանության բաժինների և տեղական համայնքների ղեկավարների շրջանում դեռևս ցածր է, որը դանդաղեցնում է մարզային մակարդակում երեխայի արդյունավետ պաշտպանության զարգացումը:

### **Առաջարկություններ.**

- ✓ Ձեռնարկել միջոցներ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրով նախատեսված և իրականացված կամ ոչ լիարժեք իրականացված միջոցառումները կատարելու ուղղությամբ: Մասնավորապես՝ ԿԶԾ և ԳԱԾ պետք է վերանայվեն և թարմացվեն վերջին տարիներին տեղ գտած երեխաների պաշտպանության նախաձեռնությունների լույսի ներքո:
- ✓ Իրականացնել վերահսկում, որպեսզի առաջարկվող ծառայությունները համաչափ բաշխվեն համայնքային և մարզային մակարդակներում և դրանցից օգտվելու պայմանները հստակ սահմանվեն՝ ելնելով երեխաների կարիքներից:
- ✓ Պետությունը պետք է բարելավի բյուջեի մշակումը խոցելի երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական և հոգեբանական պաշտպանության համար:
- ✓ Պետությունը պետք է փուլային ռազմավարական պլան մշակի, որը կապահովի հայաստանի բոլոր խոցելի երեխաների համար համապարփակ, երեխաների իրավունքների վրա հիմնված ծառայությունների ստեղծումը գործողությունների ազգային ծրագրում նախանշված ժամանակամիջոցներում և լրիվ պատասխանատվություն վերցնի որպես պարտականություն կրող:

## 2. Երեխայի սահմանումը

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայում առաջարկություն չկա այն մասին, որ որոշակի տարիքից ցածր երեխաները չպետք է հնարավորություն ունենան բողոքներ ներկայացնելու կամ փոխհատուցման համար դիմելու դատարաններ կամ այլ մարմիններին: Նման իրավունքից երեխային զրկելու ցանկացած որոշում պետք է կայացվի ընդհանուր սկզբունքների, այդ թվում՝ ոչ խտրականության և լավագույն շահերի ենթատեքստում: Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ՀՀ դատարանները երեխայի խնամքի հարցը լուծելիս մինչև 10 տարեկան երեխաների կարծիքը առհասարակ հաշվի չեն առնում: Այնինչ, Կոնվենցիայի 12 /2/-րդ հոդվածը պահանջում է, որ երեխային հնարավորություն ընձեռվի արտահայտվելու իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ընթացքում: Կոնվենցիան տարիքային սահման չի նախատեսում այս իրավունքի համար:

### Առաջարկություններ.

✓ ՀՀ Ընտանեկան օրենսգրքում կատարել փոփոխություն՝ վերացնելով տարիքային սահմանը, որին հասնելու դեպքում է միայն դատարանը հաշվի առնում երեխայի կարծիքը:

### 3. Ընդհանուր սկզբունքներ.

#### Խտրականության բացառում

Հայաստանում սելեկտիվ աբորտների հետևանքով արձանագրված սեռերի համամասնության լուրջ շեղումների պատճառով, ըստ ոլորտի մասնագետների՝ արդեն շուրջ 15 տարի անց հայ տղաները կողակից գտնելու բարդ խնդրի առաջ կկանգնեն, քանի որ նրանց թիվը մի քանիսով կգերազանցի հայ աղջիկների թվին: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՀՀ ԱՆ վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի հետ համատեղ իրականացված «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանի շուրջ 900 հազար վերարտադրողական տարիքի կանանցից մոտ 7200-ը կանխել են աղջիկ երեխաների ծնունդը՝ աբորտ անելով: Հայաստանում հղիության արհեստական ընդհատումն արգելված չէ, սակայն համաձայն «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի՝ այն թույլատրվում է միայն մինչև հղիության 12-րդ շաբաթը:

Հետազոտությունները անցկացվել են 2011-ին 2830 ընտանիքներում՝ 15-49 տարեկան կանանց շրջանում, որոնք երբևէ հղի են եղել, ինչպես նաև կանանց, որոնք երբևէ արհեստական ընդհատել են հղիությունը: Հետազոտության ընթացքում իրականացված հարցումների մասնակիցների մեծ մասը՝ տղա երեխաներին նախապատվություն տալը պատճառաբանել է «ցեղը շարունակելու, ազգանունը կրելու հանգամանքով: Այսպիսով, փաստորեն սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման հետևանքով միջինացված տվյալներով՝ Հայաստանը տարեկան կորցնում է մոտ 1400 ապագա աղջիկ երեխա:

#### **Առաջարկություններ.**

✓ Ուսումնասիրել սելեկտիվ աբորտների պատճառները, քայլեր ձեռնարկել հասարակության մեջ կանանց դերի բարձրացման եւ գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ:

✓ Կատարել փոփոխություններ համապատասխան իրավական ակտերում, համաձայն որոնց կարգելվի երեխայի սեռի կանխորոշումը, եթե դա անհրաժեշտ չէ կանխելու սեռով պայմանավորված ժառանգական հիվանդությունները, կամ սեռը հայտնել հղիության այնպիսի շրջանում, երբ առանց հատուկ բժշկական ցուցումի հղիության արհեստական ընդհատումը արգելվում է:

#### 4. Քաղաքացիական իրավունքներ և ազատություններ

##### Ծնունդների գրանցում.

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ Հայաստանում դեռևս հանդիպում են Երեխայի ծնունդը չգրանցելու դեպքեր: Իհարկե, նախորդ տարիների համեմատ այն զգալիորեն նվազել է, սակայն դեռևս նման երևույթներ կան, հատկապես հեռավոր շրջաններում: Ծննդի չգրանցման պատճառները տարբեր են՝ ա/ ծնողների մոտ անձը հաստատող փաստաթղթերի բացակայությունը և դրանք ձեռք բերելու դժվարությունները, բ/ տնային ծննդաբերությունները, որոնք հետագայում չեն գրանցվում, գ/ վարչական համակարգի դժվարամատչելիությունը, դ/ ծնողների կողմից ծննդի գրանցման կարևորությունը չգիտակցելը և այլն: Ավելորդ է ասել, որ երեխայի ծնունդը չգրանցելը ոչ միայն անօրինական է, այլև զրկում է երեխային լիարժեք քաղաքացի լինելուց ու պետության կողմից պաշտպանված քաղաքացի մեծանալու հնարավորությունից: Երեխան զրկվում է առողջապահական և մի շարք այլ մատուցվող ծառայություններից օգտվելու հնարավորությունից, նախադպրոցական ու դպրոցական աստատություններ հաճախելուց, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու իրավունքից: Կրկնվենք՝ ազատ տեղաշարժվելու, քանի որ ծննդի չգրանցելը նպաստում է երեխային բռնի կերպով տեղափոխելուն, ինչի հետևանքով մեծ է ռիսկը, որ օրերից մի օր այդ երեխան կդառնա թրաֆիքինգի զոհ:

Ծննդի պետական գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <<Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին>> ՀՀ օրենքով և <<Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին>> ՀՀ արդարադատության նախարարի 14.05.2007թ. թիվ 97-Ն հրամանով: Նշված ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ օրենսդրությամբ, ընդհանուր առմամբ, ապահովվում է ծնվելուց անմիջապես հետո երեխայի ծնունդի պետական գրանցում կատարելը: Մասնավորապես, <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքում 08.04.2008թ. կատարված փոփոխությամբ հանվել է ծննդի պետական գրանցման համար նախկինում գանձվող պետական տուրքը: Այդուհանդերձ, երեխայի ծննդի պարտադիր գրանցումն ապահովելու նպատակով անհրաժեշտ ենք համարում ՀՀ օրենսդրության մեջ որոշ հստակ մեխանիզմների ներդրումը:

<<Քաղաքացիական կացության ակտերի մասին>> /այսուհետ՝ ՔԿԱ/ ՀՀ օրենքի 14 հոդվածի 1-ին մասում թվարկված են ծննդի պետական գրանցման հիմքերը, որոնք մանրամասված են <<Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին>> ՀՀ արդարադատության նախարարի 14.05.2007թ. թիվ 97-Ն հրամանի 2-րդ կետում: ՔԿԱ մասին օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերի մեջ ներառված չեն ՀՀ Արդարադատության նախարարի վերը հիշատակված 14.05.2007թ. թիվ 97-Ն հրամանի 2-րդ կետում որպես ծննդի պետական գրանցման հիմք նախատեսված՝ նոտարական կարգով վավերացված փոխադարձ պայմանագիրը երեխային ծննդաբերած կնոջ համաձայնությունը՝ վերաբարտադրականության օժանդակ տեխնոլոգիաների միջոցով ծնունդ գրանցելու դեպքերում: Միաժամանակ ՔԿԱ մասին օրենքի 14 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ <<Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ծննդի պետական գրանցման հիմքերի բացակայության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է երեխայի ծննդաբերության փաստը հաստատող՝ դատարանի

օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա>>: Նշվածից հետևում է, որ նոտարական կարգով վավերացված փոխադարձ պայմանագրի և երեխային ծննդաբերած կնոջ համաձայնության առկայության դեպքերում երեխայի ծննդի պետական գրանցումը պետք է կատարվի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, քանի որ դրանք, որպես ծննդի պետական գրանցման հիմքեր, նախատեսված չեն ՔԿԱ մասին օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում:

ՀՀ-ում բացակայում է ծննդյան վկայան չունեցող երեխաների վերաբերյալ հաշվառված միասնական վիճակագրական տվյալներ և այդ երեխաներով, որքան էլ արտուրդ դա չինչի, զբաղվում են միայն հասարակական կազմակերպություններ:

2009թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայ օգնության միությունը (ՀՕՄ) ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի անմիջական ֆինանսական աջակցությամբ մեր երկրում ծնունդը չգրանցված երեխաների դեպքերի բացահայտման և իրավական աջակցություն ցուցաբերելու նպատակով իրականացված սոցիալազնայության արդյունքների Երևան քաղաքում, Գեղարքունիք և Շիրակ մարզերում վեր են հանվել հայտնաբերել է 97 ընտանիքներ, որտեղ գրանցված չի եղել 126 երեխայի ծնունդ: Սակայն ընդհանուր առմամբ հետազոտության արդյունքում հայտնաբերվել է այդպիսի 145 երեխա: Նույն այդ հետազոտությունը ցույց տվեց, որ չգրանցված ծնունդների ամենաբարձր ցուցանիշը Երևանում է և որքան էլ զարմանալի չլինի, բայց մեծ մասամբ ծննդյան վկայական չունեն այն երեխաները, որոնք մեծանում են ընտանիքներում և ոչ թե խնամակալ հաստատություններում: Այդպես, հայտնաբերված երեխաների 86.8 տոկոսը բնակվում են ընտանիքներում և միայն 8.9 տոկոսն է, որ բնակվում է մանկատանը, իսկ 4.1 տոկոսը հաճախում է գիշերօթիկ կամ հատուկ տիպի հաստատություններ:

ՀՕՄ-ի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ երեխաների ծնունդը չգրանցելու պատճառներն են ոչ միայն ծնողների նյութական վիճակը կամ գործընթացի վերաբերյալ տեղեկացված չլինելը, այլև ՀՀ ոստիկանության անձնագրային ստորաբաժանումների կողմից բնակության վայրում հաշվառում կամ հաշվառման վայր չունեցող ծննդկաններին (մայրերին) չանձնագրավորելը, որի պատճառով վերջիններս զրկվում են երեխայի ծնունդը գրանցելու և ծննդյան վկայական ստանալու համար ՔԿԱԳ բաժիններ դիմելու հնարավորությունից:

### **Առաջարկություններ.**

- ✓ ՀՀ օրենսդրությամբ ամրագրել դրույթ այն մասին, որ ծննդաբերած կինը բժշկական հաստատությունից դուրս է գրվում միայն երեխայի ծննդականը ներկայացնելու դեպքում:
- ✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանել, որ համայնքի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում բժշկական հաստատությունից դուրս տեղի ունեցած ծնունդները /տնային ծննդաբերությունները/ բացահայտելու և երեխայի ծնունդը գրանցելուն աջակցելու ուղղությամբ:
- ✓ ՔԿԱ մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում <<Սույն հոդվածի 1-ին մասով>> բառակապակցությունից հետո ավելացնել <<ինչպես նաև այլ իրավական ակտերով>> բառակապակցությունը:

- ✓ բարձրացնել հանրային իրազեկությունը երեխայի ծնունդը օրենքով սահմանված կարգով գրանցելու անհրաժեշտության և կարևորության վերաբերյալ:
- ✓ ստեղծել ՔԿԱԳ ընդհանուր համակարգչային տեղեկատվական ցանց՝ տեղեկատվության արագ փոխանցմամբ և ՔԿԱԳ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստելու համար:

## 5. Ընտանեկան միջավայր և այլընտրանքային խնամք

### Այլընտրանքային խնամք

Երեխաների ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականության շրջանակներում ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի թիվ 111-Ն որոշման համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների գերակա խնդիր է համարվում մանկատների բեռնաթափումը: 2006թ-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց «Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-10թթ. ռազմավարությունը», որով սահմանված հիմնական նպատակներին հասնելու համար կազմակերպվող միջոցառումների շարքում է նաև խնամատար ընտանիքների ինստիտուտի ստեղծումը: Խնամատար ընտանիքների ներդրման ծրագիրը սկսվել է իրականացվել 2006-07թ-ից, երբ UNICEF-ի ֆինանսավորմամբ ընտրվեցին 20 խնամատար ընտանիքներ: Եվ քանի որ իրականացված փորձը հաջող էր, 2008թ-ի մայիսի 8-ին ընդունվեց «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխային պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» կառավարության որոշումը, որով կարգավորվում էր հիշյալ ողջ գործընթացը: Սակայն այն բանից հետո, ինչ գործընթացն ամբողջությամբ ստանձնեց Կառավարությունը, Հայաստանում խնամատար ընտանիքների թիվն այդպես էլ չավելացավ և 2012թ-ի պետական բյուջեի նախագծով չի նախատեսվել համապատասխան ֆինանսավորման ավելացում:

Այսօր Կառավարությունը տարեկան ծախսում է շուրջ 4 հազար դոլար երեխային մանկատանը պահելու համար, մինչդեռ խնամատար ընտանիքում երեխայի տեղավորումը կապահովի երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն ու կնվազեցնի ծախսերը մինչև

3

հազար

դոլար

[/http://www.unicef.org/armenia/Costing\\_Residential\\_Care\\_Institutions\\_in\\_Armenia\\_report\\_eng.pdf/](http://www.unicef.org/armenia/Costing_Residential_Care_Institutions_in_Armenia_report_eng.pdf/):

UNICEF-ի կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խնամատար ընտանիքների ծրագրին անցնելու դեպքում պետությունը կարող է տարեկան տնտեսել 1 մլն 800 հազար դոլար, որը կարելի է ուղղել այդ ոլորտը բարելավելուն:

Առողջ երեխաների համար նախատեսված մանկատներում խնամվող երեխաների թիվը նախորդ տարիների համեմատ նվազել է, սակայն խնամվող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում յուրաքանչյուր տարի ավելանում է՝ պայմանավորված համապատասխան մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների (ցերեկային կենտրոններ, վերականգնողական կենտրոններ և այլն) թվի պակասով, ինչպես նաև պետական հոգածության կարիք ունեցող հիվանդ երեխաների թվի աճով:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2011թ.-ին կատարված երեխաների իրավունքների իրավիճակի վերլուծություն ուսումնասիրությունը ևս վկայում է, որ 2007թ-ից մինչ օրս խնամատար ընտանիքների թիվը չի ավելացել և կարելի է ասել՝ առկա է որոշակի լճացում, ինչը բացատրվում է, նախ՝ հասարակության ոչ տեղեկացված լինելու

հանգամանքով և իհարկե՝ պետության կողմից ակտիվ քայլեր չձեռնարկելով՝ մշտապես պատճառաբանելով ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայությամբ, ինչպես նաև առկա միջոցները ոչ արդյունավետ և նպատակային օգտագործելով»:

Խնամատար ընտանիքները ՀՀ-ում ընտրվում են նույն կարգով և չափանիշներով, ինչ երեխային որդեգրելու ցանկություն ունեցողները՝ համապատասխան կենսապայմանների և բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ուսումնասիրության, սոցիալական և այլ պայմանների առկայության դեպքում: Խնամատար ընտանիքում գտնվելու փաստով երեխայի կենսաբանական ծնողների իրավունքները նրա նկատմամբ չեն դադարում, և ծնողները կարող են հետ վերցնել երեխային խնամատար ընտանիքից: Չնայած նման դեպքերը կարող են առաջացնել հոգեբանական խնդիրներ, այնուամենայնիվ խնամատար ընտանիքները արդյունավետ գործիք կարող են լինել, ինչպես արդեն նշվեց, երեխայի ընտանիքում մեծանալու իրավունքի ապահովման համար: Բացի դրանից, այսօր մանկատներում գտնվող երեխաների 80-90 տոկոսը որդեգրման ենթակա չեն: Պատճառը նրանց կարգավիճակի ոչ հստակ լինելն է, ինչը պայմանավորված է ընդունելության չափորոշիչների անհստակությամբ: Նման երեխաների համար խնամատար ընտանիքը այլընտրանք է հանդիսանում: «Երեխաների խնամքի հաստատությունների արագ գնահատում» և «Դեպի երեխայի խնամքի այլընտրանքային ծառայություններ. խնամքի հաստատությունների և համայնքային ծառայությունների ծախսերի գնահատումը» ուսումնասիրություններն արվել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ և ընդհանուր հաշվով 50 հաստատությունում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խնամքի հաստատություններում ապրող մոտ 4000 երեխաներից շուրջ 80 տոկոսը առնվազն մի ծնող ունի: Նրանք այնտեղ հայտնվում են հիմնականում սոցիալ-տնտեսական դժվարությունների հետևանքով: Երեխաների մոտ 40 տոկոսը հատուկ կարիքներ ունեցող երեխաներ են: Կառավարությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ դեռևս 2004-ից իրականացնում է խնամատարության ինստիտուտի ներդրման փորձնական ծրագիր, որի նպատակն է խնամքի հաստատությունների բեռնաթափումը: Բայց այն դեռևս հաջողություն չունի:

Ըստ մասնագետների հաշվարկների՝ երեխային մանկատանը կամ խնամքի այլ հաստատություններում պահելու տարեկան միջին արժեքը մոտ 3800-4000 դոլար է, իսկ այս ծրագրով մեկ ամսվա համար հատկացվում է 87 000 դրամ, որը նախատեսված է երեխայի կարիքների բավարարման ու խնամատար ծնողի վարձատրության համար: Դա տարեկան կազմում է 960 հազար դրամ կամ 2700 դոլար: Կառավարության ծրագրով նախատեսված է տարեկան 25 երեխայի խնամքի ֆինանսավորում: Այսօր Հայաստանում ընդամենը 20 խնամատար ընտանիք կա, որոնք խնամում են 22 երեխայի: Խնամքի հաստատությունների վերացումն արդարացված է տնտեսական տեսանկյունից, քանի որ խնամատար ընտանիքի դեպքում մանկատանը տրվող տնտեսված գումարները կուղղվեն խնամատար ընտանիքին:

Երեխայի խնամքի հաստատությունների արագ գնահատումը, որն իրականացվել է Ներդաշնակ հասարակություն սոցիալական աշխատողների հայաստանյան ասոցիացիայի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ, անցկացվել է Հայաստանում գործող երեխաների խնամքի



պետական և բարեգործական /ընդհանուր թվով 50/ հաստատություններում: Տվյալներ են հավաքագրվել երեխաների սեռի, տարիքի, առողջության, ընտանեկան պայմանների, հաշմանդամության կարգավիճակի, երեխա/ընտանիք փոխհարաբերությունների և հաստատությունների անձնակազմի վերաբերյալ: Հիմնական տվյալները կոչ են անում որոշում կայացնողների առավել մեծ ուշադրությանը և կարող են նպաստել երեխաների իրավունքների պաշտպանությանը՝ շեշտը դնելով հաստատությունների բեռնաթափման վրա՝ որպես գերակայություն: Հաստատություններում ապրող 3,823 երեխաներից /բացառությամբ 1,079, որոնք ամեն օր հաճախում են տուն/, 1,675-ը /44%/ հազվադեպ են տուն գնում և ընտանիքի հետ վերամիավորման ծրագրեր չեն մշակվում նրանց համար: Հաստատություններում ապրող առավել քան 630 /16%/ երեխաների մասին չկա ոչ մի տեղեկատվություն երեխաների իրենց ընտանիքների հետ ունեցած կապի տեսակի մասին: Խնամքի հաստատություններում գտնվող և հաստատված հաշմանդամությամբ 1,711 երեխաներից միայն 428-ն են /25 %/ ստանում հաշմանդամության նպաստ: Հատուկ տիպի հաստատություններում ապրող մոտ 1,000 երեխաներ չունեն հաշմանդամության կարգավիճակ, այդպիսով կամ նրանց հաշմանդամության նպաստ ստանալու իրավունքն է խախտվում, կամ նրանք չպիտի լինեն հատուկ տիպի հաստատություններում:

### **Առաջարկություններ.**

- ✓ Օգտագործելով Հայաստանում փորձնական ծրագրի արդյունքներն ու փորձառությունը՝ պետական բյուջեում համապատասխան վերաբաշխումներ կատարել և ավելացնել խնամատար ընտանիքների թիվը:
- ✓ Այլընտրանքային ծառայությունների ընդլայնման միջոցով ապահովել երեխաների հոսքի նվազեցումը մանկատներ և հատուկ հանրակրթական հաստատություններ,
- ✓ Յուրաքանչյուր տարվա բյուջեով սահմանել խնամատար ընտանիքների որոշակի կոնկրետ թվաքանակ:
- ✓ Ապահովել այլընտրանքային (ցերեկային) խնամք իրականացնող հաստատությունների ցանցի համաչափ զարգացում՝ հաշվի առնելով բովանդակային տարբեր մոդելներ և ուշադրություն դարձնելով մի շարք հարցերի: Դրանք են՝ այդ կենտրոնների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ծախսերի արդյունավետության ապահովում՝ հաշվի առնելով դրանց անարդյունավետության ներկայիս աստիճանը:
- ✓ Հաշվի առնելով ՄԱԿ-ի ուղենիշների պահանջները՝ նպաստել այլընտրանքային խնամքի վերաբերյալ տեղեկությունների տարածմանը հասարակության լայն շրջանակներում, ինչպես նաև որոշում կայացնողների շրջանում:

### **Որդեգրում**

Երեխաների պաշտպանության ոլորտում ամենաառանցքային խնդիրներից թերևս կարելի է համարել որդեգրումը: Վերջին տարիներին ՀՀ-ը ձեռնարկել է որոշակի քայլեր ոլորտի

արդյունավետ կենսագործման համար, սակայն դրանք բավարար չեն անհրաժեշտ արդյունքների հասնելու համար:

Այսպես, ՀՀ-ում գործում է երեխաների որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովը, սակայն չկա որևէ իրավական մեխանիզմ, որը գործնականում թույլ կտա ապահովել այս մարմնի թափանցիկ գործունեությունը: Ճիշտ է, ՀՀ կառավարության որոշմամբ 2000 թվականին հաստատվել է որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի կանոնադրությունը, սակայն կանոնադրությունը չի պարունակում դրույթներ, թե ինչ սկզբունքով են ընտրվում հանձնաժողովի անդամները, ինչ պարբերականությամբ է գումարում նիստերը; Կարևոր է նաև նշել այն փաստը, որ բացակայում են նաև հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները բողոքարկելու մեխանիզմները:

Որդեգրման ոլորտի հաջող արդիական խնդիրը օտարերկրացիների կողմից հայ հաշմանդամ երեխաներ որդեգրումն է: Հաշմանդամ երեխաների որդեգրման պրակտիկա Հայաստանում գոյություն չունի: Հասարակական կազմակերպությունների կողմից կատարված մի շարք ուսումնասիրություններ վկայում են, որ Հայաստանում հաշմանդամ երեխա որդեգրած ընտանիքների համար պետության կողմից չեն սահմանվում որևէ հարկային արտոնություններ, իսկ հաշմանդամ երեխաների համար տրամադրվող կենսաթոշակը չնչին գումար է կազմում և չի բավականացնում անգամ առաջնային պահանջների բավարարման համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ այլ երկրներում հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքները օգտվում են արտոնությունների լայն շրջանակներից: Դրանով իսկ պետությունը օժանդակում է հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման գործընթացին:

Օտարերկրացիների կողմից որդեգրվող հայ երեխաների ապահովությունը երաշխավորելու պարտականությունը դրված է հյուպատոսությունների վրա: Սակայն «Հյուպատոսական ծառայության մասին ՀՀ օրենքով» սահմանված է միայն որդեգրված հայ երեխաների հաշվառում, իսկ հաշվառումից հետո վերահսկողության իրականացմանն ուղղված պարտավորություններ հյուպատոսարանը այլևս չի կրում:

### **Առաջարկություններ.**

- ✓ Որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի կանոնադրությամբ նախատեսել հանձնաժողովի թափանցիկ գործունեությունը ապահովելու վերաբերյալ անհրաժեշտ դրույթներ:
- ✓ Սահմանել հատուկ արտոնություններ հաշմանդամություն ունեցող երեխաներին որդեգրող ընտանիքների համար:
- ✓ Կատարել փոփոխություն «Հյուպատոսական Ծառայության մասին ՀՀ օրենքում»՝ սահմանելով որդեգրության հանձնած երեխաների ընտանեկան պայմանների վերահսկողություն իրականացնելու պարտավորություն:

## 6. Հիմնական առողջական և բարօրության ծառայություններ

### Մոցիայական ապահովություն և երեխայի խնամքի ծառայություններ և հիմնարկներ/կյանքի ստանդարտ

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հիմնահարցերին ուղղված քաղաքականությունը շարունակում է մնալ գերակա ուղղություն, որն ուղղված է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի հզորացմանը, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների թվի նվազեցմանը, հաստատություններում երեխաների հոսքի կանխարգելմանը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավմանը, խնամվող երեխաների հասարակությանը ինտեգրմանը, խնամքի այլընտրանքային ծառայությունների ստեղծմանը:

Կատարված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ մանկատների և հատուկ դպրոցների շենքերի մեծ մասը հին է և վերանորոգման կարիք ունի, իսկ որոշները նույնիսկ կաթսայատներ չունեն դրանք ջեռուցելու համար: Որոշ հաստատություններում առկա են է նաև գերծանրաբեռնվածության խնդիր: Օրինակ՝ Խարբերդի հատուկ մանկատանը 6 երեխայի համար նախատեսված սենյակներում բնակվում են 10-12 երեխաներ և վերջիններս ազատ տարածքի բացակայության պատճառով ազատ տեղաշարժվելու հնարավորություն չունեն, ինչը խնդիրներ է առաջացնում հատկապես սայլակների դեպքում: Որոշ դեպքերում անձինք անհասկանալի պատճառով շարունակում են մնալ այդ հաստատություններում մինչև 25-30 տարեկան հասակը, մինչդեռ ըստ հաստատված կանոնակարգի՝ 18 տարեկանը լրանալուց հետո նրանք, ովքեր ունեն հոգեկան խնդիրներ, պետք է տեղափոխվեն Վարդենիսի հոգեբանական տուն-ինտերնատ:

Մանկատներում և խնամքի այլ հաստատություններում բացակայում են նաև բավարար քանակի մասնագետներ, տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար, արդյունքում՝ երեխաները չեն ստանում անհրաժեշտ խնամք և հոգատարություն: Իսկ առկա մասնագետները որևէ դասընթաց, վերապատրաստում չեն անցնում աստիճանաբար զարգացող աշխատանքի մեթոդներին ծանոթանալու և դրանք պրակտիկայում կիրառելու համար:

Չնայած որ մանկատները և խնամքի այլ հաստատությունները երեխաների համար լուծումներ են առաջարկում մի շարք խնդիրների համար, այնուամենայնիվ հնարավոր չէ պնդել, որ նման հաստատություններում երեխաները մեծանում են առողջ միջավայրում և ապահովվում է նրանց իրավունքների պաշտպանությունը: Չնայած նրան, որ նրանց տրամադրվում է ապաստան, սնունդ, կենցաղային խնամք, բարեկեցության ինչ-որ մի մակարդակ, այնուամենայնիվ, դրանք վերաբերում են միայն ֆիզիկական պահանջումների բավարարմանը, և մի շարք կարևոր իրավունքների իրականացումն անտեսվում է:

Մասնավորապես՝ նման երեխաները սիրո միջավայրում չեն մեծանում, ինչն էլ խորը բացասական ազդեցություն է թողնում նրանց հոգեբանական զարգացման վրա, առաջանում է թերարժեքության բարդույթ, նրանց մոտ չեն ձևավորվում ընտանեկան և ծնողական ունակությունները, պատասխանատվության և ինքնուրույնության զգացողությունները, հաճախ պիտակավորվում են հասարակության կողմից, որն էլ հանգեցնում է մեկուսացման, խարանի ենթարկման: Համապատասխան ուսումնասիրությունները փաստում են նաև, որ

նման հաստատություններում երեխաների բռնության ենթարկվելու ռիսկը վեց անգամ ավելի է, քան ընտանիքում:

Նման պայմաններում, ակնհայտ է, որ հնարավոր չէ խոսել երեխաների պաշտպանված լինելու, նրանց իրավունքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների առկայության մասին: Ինչ վերաբերում է ներկայումս գործող մանկատներում և խնամքի այլ հաստատություններում առկա խնդիրներին, ապա դրանց աշխատակիցների և տնօրենների կողմից մշտապես հիշատակվում է բավարար ֆինանսավորման բացակայությունը: Եվ չնայած պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներին և տարբեր միջազգային կազմակերպությունների և բարերարների կողմից տրամադրվող օգնություններին, որոշ վայրերում առկա է նույնիսկ նվազագույն կենցաղային պայմանների ապահովման խնդիր: ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2009 և 2010թթ. տնօրենների նկատմամբ քրեական գործերի հարուցումը վկայում է այն մասին, որ այստեղ անհրաժեշտ է արդյունավետ միջոցներ նախատեսել կոռուպցիայի և այլ չարաշահումների դեմ պայքարելուի համար:

ՀՀ կառավարության 18.12.2003թ. թիվ 1745-Ն որոշմամբ հաստատված ծրագրին համապատասխան՝ մինչև 2009թ. նախատեսվել էր ստեղծել թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի 3 կենտրոններ և մինչև 2015թ. երեխաների համայնքային ցերեկային 25 կենտրոններ: Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝, նախարարությունը նշել է, որ այս տարիների ընթացքում ձեռնարկված քայլերի արդյունքում թափառաշրջիկ մուրացիկ երեխաների հիմնախնդիրը կորցրել է իր հրատապությունը և նախարարությունն իր ջանքերն ուղղում է ռիսկային երեխաների խնդիրների կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Նախարարության կողմից փաստվել է հետևյալ պատկերը.

1. Թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի համար 3 կենտրոնների մասով՝ 2011թ. «Զատիկ» մանկատան կանոնադրությունում ներառվել են մի շարք գործառույթներ, համաձայն որոնց կազմակերպությունը իրականացնում է նաև Երևան քաղաքում բնակվող մուրացիկ թափառաշրջիկ երեխաների ընդունելությունը և մատուցում նրանց համապատասխան ծառայություններ:
2. Երեխաների 25 ցերեկային կենտրոնների ստեղծման մասով ստեղծվել են 2-ը, ինչպես նաև գործում են «Հույսի կամուրջ» ՀԿ-ի հետ համատեղ համայնքային ծառայություն մատուցող երեխայի զարգացման 14 կենտրոններ:

ՀՀ Վիճակագրական ծառայության կողմից հրատարակված «Աղքատությունը և Սոցիալական Պատկերը» 2011թ. զեկույցի համաձայն, մանկական աղքատությունը շարունակում է մնալ ավելի բարձր, քան բնակչության մնացած մասի աղքատության մակարդակը:

Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրված պաշտոնական տեղեկատվություն համաձայն, 2010թ. դրությամբ Հայաստանում ավելի քան 300.000 երեխաներ կամ 41.4 տոկոսն ապրում է աղքատության մեջ՝ ամբողջ բնակչության 35.8 տոկոսի համեմատ: Ավելի քան 27,000 երեխաներ կամ 3.7 տոկոսը ծայրահեղ աղքատ են՝ ամբողջ բնակչության 3 տոկոսի համեմատ:

Համաձայն զեկույցի՝ 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքներն ամենաաղքատն են: Այս ընտանիքներում աղքատության ընդհանուր մակարդակը մոտավորապես 71 տոկոս է, մինչդեռ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 26.4 տոկոս:

Հաշմանդամ երեխաները երկրորդ ամենախոցելի խումբն են կազմում: Այս երեխաների շուրջ 5 տոկոսն ապրում է ծայրահեղ աղքատության մեջ, մինչդեռ 54 տոկոսն աղքատ է: Ընտանեկան նպաստները շարունակում են կարևոր դեր ունենալ ծայրահեղ աղքատ և աղքատ ընտանիքների բարեկեցության հարցում: Չնայած բարելավված թիրախային աջակցությանը՝ ընտանեկան նպաստները հասանելի չեն բոլոր նրանց, ովքեր դրանց մեծ կարիքը ունեն: Ներկայումս, ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 67 տոկոսը և աղքատ ընտանիքների 26 տոկոսն է կանոնավոր ընտանեկան նպաստ ստանում, որը դեռևս ցածր է 2008թ. ցուցանիշներից:

ՀՀ Ազգային վիճակագրության ծառայությունը զեկույցում ևս մեկ անգամ հաստատեց, որ ՀՆԱ-ի միայն 0.1 տոկոսն անհրաժեշտ կլինի բոլոր ծայրահեղ աղքատ ընտանիքներին ընտանեկան նպաստ տրամադրելու համար:

### **Առաջարկություններ.**

- ✓ Բարելավել սոցիալական աջակցության համակարգը, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի և երեխայի խնամքի համար հատկացվող նպաստի կարգը:
- ✓ Ձեռնարկել համապատասխան քայլեր Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովման, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացման, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավման ուղղությամբ:
- ✓ Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաստատություններում խնամվող երեխաներին իրենց կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորելու համար :
- ✓ Միջոցառումներ մշակել կանխարգելելու համար հաստատություններում տեղավորման ռիսկի ենթակա երեխաների մուտքը այդ հաստատություններ:
- ✓ Համակարգել մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, նրանց հետագա ինքնուրույն կյանքի կազմակերպումը և հասարակությանը ինտեգրման գործընթացը:
- ✓ Մշակել հստակ քաղաքականություն ուղղված 6-18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաների սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական գործնական աջակցության ցուցաբերմանը:

## 7. Կրթություն, հանգիստ և մշակութային միջոցառումներ.

### Կրթության իրավունքն ու նպատակները

Կրթության ոլորտի խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս որ կրթության ոլորտում առկա խնդիրներից մեծ մասի լուծումը պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում: Այս հարցին անդրադարձել է Մարդու իրավունքների պաշտպանը իր 2011թ. տարեկան զեկույցում /<http://www.pashtpan.am/library/library/page/101/type/3/>: Դրանք հնարավոր է լուծել արդյունավետ վարչարարության, կազմակերպչական աշխատանքների, օրենսդրական բարեփոխումների և նախարարության վերահսկողությունը պատշաճ կազմակերպելու միջոցով: Բացասական է այն, որ հաճախ Կրթության և գիտության նախարարության աշխատանքներում թերացումների վերաբերյալ քաղաքացիների դժգոհությունները, դիմում-բողոքները, մամուլում հրապարակված տեղեկություններն ըստ էության քննության չեն առնվում, այսինքն՝ բավարար արդյունավետ չէ նախարարության և քաղաքացիական հասարակության միջև կապը:

Ըստ մի շարք մասնագետների գնահատականների հանրակրթական հաստատությունների համար նախատեսված դասագրքերի մրցույթներն անցկացվում են ոչ օբյեկտիվ չափանիշներով, որի պատճառով, որոշ դեպքերում, աշակերտներին պարտադրվել են բարդ դասագրքեր: Դրա պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ չնայած դասագրքերի վերաբերյալ դպրոցների տնօրեններից պահանջվում են կարծիքներ, սակայն հետագայում այդ կարծիքները կամ եզրակացությունները հաշվի չեն առնվում, որովհետև նման պարտականություն նախարարությունը չունի, հետևաբար դպրոցում աշխատող մասնագետների կարծիքների հավաքը հաճախ կրում է ձևական բնույթ:

Հիմք ընդունելով այն սկզբունքը, որ որտեղ բարձր են կոռուպցիոն ռիսկերը, ցածր է կրթության որակը, Պաշտպանը հարցում է կատարել ՀՀ ԿԳՆ այն մասին, թե 2011 թվականի ընթացքում դպրոցներում և կրթական այլ հաստատություններում դրամաշորթության կամ կոռուպցիայի քանի դեպք է արձանագրվել, նախարարությունից պատասխանել են, որ 2011թ. ՀՀ կրթության պետական տեսչություն հասցեագրված դիմումներում և «Թեժ գծով» ստացված ահազանգերում դիմումատուները նշել են դրամահավաքի 12 դեպք, դրամաշորթության կամ կոռուպցիայի՝ 11 դեպք: Ընդհանուր թվով 21 տնօրենների նկատմամբ կիրառվել են «խիստ նկատողություն», «նկատողություն» կարգապահական տույժերը, իսկ 1 տնօրեն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը՝ բավական նկատելի: Բարձրագույն կրթության հետ կապված բարձր ծախսերը և հատկապես դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը: Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների համար՝ զարգացման շեղումները շտկելու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

Համաձայն «<Կրթության մասին>> ՀՀ օրենքի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով: Նախարարության ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Բարեփոխման ծրագրի արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն հասարակության, ծնողների, մանկավարժների, հատուկ վերականգնողական, առողջարարական ծառայությունների համակարգված համագործակցության միջոցով: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով կընդլայնվեն հանրակրթական դպրոցներում և համայքներում հատուկ մանկավարժական, սոցիալական, հոգեբանական ծառայությունները:

### **Առաջարկություններ.**

- ✓ Հետևողական աշխատանքներ իրականացնել կրթության ողջ համակարգում առկա կոռուպցիոն երևույթները վերացնելու ուղղությամբ՝ նախատեսելով հակակոռուպցիոն միջոցառումներ, դրանք արդյունավետ իրականացնել հետևյալ ուղղություններով՝ պետական բյուջեի միջոցների խտրական և կոռուպցիոն բաշխումներ, հովանավորչական և կոռուպցիոն դրսևորումներով մրցույթներ, դպրոցական դրամահավաքություն և այլն:
- ✓ Գործադրել հրատապ և արդյունավետ միջոցներ դասաքրքերի որակի բարձրացման ուղղությամբ:
- ✓ Վերանայել աշակերտների թվաքանակով դպրոցներին հատկացվող ֆինանսավորման կարգը, որպեսզի քիչ թվով աշակերտներ ունեցող դպրոցները հատկացված գումարներով հնարավորություն ունենան բարելավել նվազագույն հիգիենիկ պայմանները, ձեռք բերեն անհրաժեշտ գույք, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, ունենան համակարգչային դասարան և այլն:
- ✓ Ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացնել մոնիթորինգ՝ բացահայտված խախտումներին տալով հանրային հնչեղություն, որով կկանխվի խախտումների կրկնակիությունը:
- ✓ Գործուն միջոցներ ձեռնարկել քաղաքային և գյուղական հանրակրթական ուսումնական հաստատությունների համաչափ զարգացման ուղղությամբ:
- ✓ Բարելավել նախադպրոցական կրթության ծառայությունների որակն ու մատչելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը:
- ✓ Ընդլայնել դպրոցահասակ երեխաների, ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ հանրակրթական դպրոցներում:
- ✓ Ընդլայնել ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցը

Անչափահաս ազատագրվածների կրթությունը և մասնագիտական ուսուցումը

ՀՀ օրենսդրությունը չունի հստակ քաղաքականություն, զարգացման ամրագրված ուղղություններ անչափահաս դատապարտյալների և կալանավորված անձանց ուղղման ու վերականգնման վերաբերյալ՝ որպես ինստիտուցիոնալ մոտեցում:

Հատկապես հատկանշական է անչափահասների կրթության և մասնագիտական հմտությունների ուսուցման ուղղությամբ իրավական կարգավորումների բացակայությունը կամ թերությունները: Ուրտին առնչվող իրավական ակտերում պետական մոտեցումները շատ ընդհանրական են, և գրեթե ցանկացած կարգավորում վերաբերում է դատապարտյալներին կամ կալանավորված անձանց ընդհանուր առմամբ (ներառյալ անչափահասները և ներառյալ կրթության կազմակերպման գործընթացը: Թերևս բացառություն կարելի է համարել քրեակատարողական օրենսդրությունն ու ՀՀ արդարադատության նախարարի թիվ 44-Ն հրամանով հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը», որտեղ որոշակի առանձնացված են անչափահասների վերաբերյալ մոտեցումներ՝ առանձին գլուխներով կամ վերնագրերով):

Որևէ իրավական ակտով չեն նախատեսվում կոնկրետ մեխանիզմներ ու քայլեր, օրինակ՝ անչափահաս կալանավորվածների կամ դատապարտյալների կրթության կամ մասնագիտական կրթության կազմակերպման ուղղությամբ: ՀՀ օրենսդրությունում բացակայում է մեկ միասնական ռազմավարությունը՝ անչափահաս դատապարտյալների ուղղման և վերականգնման վերաբերյալ: Չկան հստակ մոտեցումներ կրթության և մասնագիտական հմտությունների ուսուցման մեկ միասնական ծրագրի վերաբերյալ: ՀՀ կառավարության 06.09.2007թ.-ի թիվ 1028-Ն որոշմամբ հաստատվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը»:

Նշված կարգերում թույլատրված ուսուցման ձև է հանդիսանում նաև ուսումնական նյութերով ուսանողի ինքնուրույն աշխատանքը՝ առանց լսարանային կամ լաբորատոր պայմանների առկայության: Սակայն Կառավարության մեկ այլ՝ 03.08.2006թ.-ի թիվ 1543-Ն որոշմամբ դրսեկության կարգով հանրակրթությունը և նախնական մասնագիտական կրթությունն արգելված է անչափահաս կալանավորվածներին և դատապարտյալներին: Մի շարք հակասություններ և բացթողումներ կան ՀՀ օրենսդրությունում: Օրինակ՝ Քրեակատարողական օրենսգրքով թույլատրվում է հեռավար կրթություն, սակայն Կառավարության որոշմամբ հեռահաղորդակցություն ապահովող սարքերը (այդ թվում՝ ինտերնետ) հաստատված են արգելված իրերի ցանկում: Քրեակատարողական օրենսգրքում կամ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգում հստակ չի տարանջատվում մասնագիտական կրթություն և մասնագիտական ուսուցում հասկացությունները, որոնք հստակ սահմանված են «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով: Կալանավորված անձանց մասնագիտական ուսուցում ստանալու իրավունք օրենքով վերապահված չէ, սակայն ուղղիչ հիմնարկների և



կալանավորվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 112-րդ կետը նման հնարավորություն նախատեսում է անձնական հաշվին կամ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

### Առաջարկություններ.

✓ Փոփոխություններ կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածում և ՀՀ կառավարության թիվ 1543-Ն որոշման 22-րդ գլխում՝ տարանջատելով անչափահաս դատապարտյալների կարճաժամկետ մեկնման պահանջները, այդ թվում՝ ժամկետներն ու տևողությունը:

✓ Լրացումներ կատարել ՀՀ կառավարության թիվ 1543-Ն որոշման մեջ՝ սահմանելով «սոցիալական վերականգնում» հասկացությունը և կրթություն ստանալու կամ այն շարունակելու գործընթացներն ամրագրել որպես սոցիալական վերականգնմանն ուղղված գործընթացներ:

✓ Համապատասխան լրացում կատարել նաև ՀՀ արդարադատության նախարարի թիվ 44-Ն հրամանով սահմանված Կարգի 11-րդ գլխի 57-րդ կետում՝ բաղադրատարրերի մեջ ընդգծելով կրթության (այդ թվում՝ մասնագիտական) բաղադրիչը:

✓ Ունենալ պարբերաբար թարմացվող վիճակագրություն, որը թույլ կտա գնահատել և արդյունքները մշտադիտարկման ենթարկել՝ իրադրությունը վերահսկելու և համապատասխան շտկումներ մտցնելու նպատակով:

✓ Հնարավորինս զուգակցել կրթությունը և մասնագիտական ուսուցումը՝ բանտից հասարակություն անցումն էլ ավելի սահուն դարձնելու նպատակով:

✓ Հնարավորինս ընդլայնել հեռավար կրթության և մասնագիտական ուսուցման հնարավորությունները՝ օգտագործելով ինտերնետի համացանցի ընձեռած հնարավորությունները՝ հաշվի առնելով անվտանգության բոլոր նկատառումները:

✓ Մշակել ենթաօրենսդրական ակտի նախագիծ, որն անմիջականորեն կվերաբերի կոնկրետ անչափահաս դատապարտյալների ուղղմանը, վերականգնմանը և հասարակությունում նրանց վերաինտեգրման երաշխիքների ստեղծմանը՝ կրթությունը և մասնագիտական կրթությունը դիտելով որպես նրանց ուղղման հիմնական միջոց կամ միջոցներից մեկը:

✓ Առկա իրավական ենթաօրենսդրական ակտերում, մասնավորապես՝ «Հանցավորության կանխարգելման պետական ծրագիր», «Երիտասարդական քաղաքականության պետական հայեցակարգ», «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգ», հստակ սահմանազատել անչափահաս ազատազրկվածների կրթության (այդ թվում՝ մասնագիտական) կազմակերպման անհրաժեշտությունը և ամրագրել կոնկրետ քայլեր և այդ քայլերի կատարման համար կոնկրետ մեխանիզմներ նրանց կրթությունը կազմակերպելու ուղղությամբ:

## 8. Հատուկ պաշտպանության միջոցներ

### Տնտեսական շահագործում

<<Ներդաշնակ հասարակություն>> սոցիալական աշխատողների սոցիալապես կողմից 2008թ. կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատող երեխաների թիվը 6.1%՝ 7-18 տարեկան /չլրացած/ անչափահասներ ունեցող տնային տնտեսություններում: Սակայն Հայաստանում տնային տնտեսության աշխատանքներում ներառված են համարյա բոլոր երեխաները: ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս աշխատել 16 և բարձր տարիքի անձանց, որոշ դեպքերում նաև 14 տարեկան անձանց՝ ծնողի/խնամակալի համաձայնությամբ: Օրենքը նախատեսում է առողջությանը վնասող հստակ սահմանված պայմանների բացառում երեխայի համար, հակառակ դեպքում նախատեսվում են վարչական տույժեր: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները կարող են ավելի փոքր տարիքում ներգրավել աշխատանքներում, քան 14-ն է, որպես կանոն առանց ծնողի կամ խնամակալի համաձայնության:

Չաշխատող երեխաների համեմատությամբ, աշխատող երեխաները ավելի հաճախ են տնականորեն բացակայում դասերից կամ ընդհանրապես կրթությունից դուրս մնում, ավելի շատ են տրավմաներ ստանում, ավելի քիչ հնարավորություններ են ունենում կրթության շարունակման համար: Օրենսդրական կարգավորման տեսանկյունից, աշխատող երեխաների 1/3-ը օրենքով թույլատրելի սահմանից ներքև է գտնվում, հետևաբար, առկա աշխատանքային օրենսդրությունը չի կարող ապահովել աշխատող երեխաների պաշտպանությունը: Բացառապես օրենսդրական միջոցներով երեխայի իրավունքների ճանաչումը և երեխայի աշխատելու պարագայում նրա պաշտպանության կազմակերպումը չի կարող արդյունավետ լինել, անհրաժեշտ են վերահսկողության ճկուն մեխանիզմներ:

### **Առաջարկություններ.**

- ✓ Կայուն զարգացման ռազմավարության մեջ ներառել երեխաների աշխատանքի կանխարգելման համար հստակ քայլեր:
- ✓ Աշխատանքի պետական տեսչությունում ստեղծել երեխայի աշխատանքի հատուկ բաժին, որը պետք է բացահայտի երեխաների ապօրինի աշխատանքի դեպքերը:
- ✓ Նպաստել, որպեսզի զբաղվածության տարածքային կենտրոնները աշխատեն նաև երեխաների հետ՝ մասնագիտական կողմնորոշման և վերապատրաստման ծրագրերով:

### Անչափահասների արդարադատության իրականացումը

Այս ոլորտում կատարված ուսումնասիրությունները, որ անչափահասների արդարադատության շրջանակային օրենք Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի: Արդարադատության իրականացման վերաբերյալ դրույթ ներքև սահմանվում են ՔՕ-ով, ՔԴՕ-ով, ՔԿՕ-ով, ինչպես նաև այլ օրենքներով ու ակտերով: Հայաստանում չկան անչափահասների հատուկ դատարաններ կամ մասնագիտացված դատավորներ: Թեև պետական պաշտոնյաները պնդում են, որ գոյություն ունի որոշ դատավորների՝ անչափահասների գործերով մասնագիտացնելու ոչ պաշտոնական գործելաոճ, և անչափա-

հասանելի գործերը հանձնվում են փորձառու դատավորներին, հիմնականում՝ դատարանների նախագահին, սակայն դա սուբյեկտիվ մոտեցում է:

Դատախազության համակարգում նույնպես չկա անչափահասների գործերի քննություն և քրեական հետապնդում իրականացնող մասնագիտացված ստորաբաժանում: Ներկայումս անչափահաս մեղադրյալներին անվճար ծառայություններ տրամադրում է հանրային պաշտպանի գրասենյակը:

Քրեական օրենսգրքի 5-րդ բաժինը սահմանում է անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: ՔՕ 85-րդ և 86-րդ հոդվածներում նշվում են պատժի այն տեսակները, որոնք կարող են նշանակվել անչափահաս իրավախախտների նկատմամբ: Դրանք են՝ տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը և որոշակի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև ընդգծում է քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառումը: Այս կարգավորումը բավականին նեղ է և անհամարժեք, որը պատշաճ կերպով հաշվի չի առնում պատանիների և երեխաների առանձնահատկությունները. անչափահասները դժվար թե ի վիճակի լինեն տուգանք մուծել, իսկ նրանց աշխատանքը կարող է հակասել Աշխատանքային օրենսգրքի պահանջներին, որի արդյունքում նվազեցվում են անչափահասների նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունները՝ չափահասների համեմատությամբ:

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ազատել անչափահասներին քրեական պատասխանատվությունից՝ կիրառելով դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: ՔՕ 91-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

Անչափահաս իրավախախտների իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքը անմեղության կանխավարկածն է: Այն անչափահասը, որը ենթադրվում է կամ մեղադրվում է քրեական օրենսդրությունը խախտելու մեջ, պետք է օգտվի չփարատված կասկածներն իր օգտին մեկնաբանվելու իրավունքից, և նա կարող է մեղավոր ճանաչվել միայն այն դեպքում, երբ մեղադրանքները հաստատվել են ողջամիտ կասկածից դուրս՝ դատավորի որոշմամբ: Փաստ է, որ սխալներ լինում են: Անչափահասները ներքաշվում են այնպիսի արարքների մեջ, որ երբեք չէին մտադրվել կատարելու, նրանք կարող են ազդեցության տակ ընկնել և խոստովանել այնպիսի արարքներ, որոնք չեն կատարել, վկաները շփոթում են այն անձանց, որոնք մեղադրվում են հանցագործության մեջ:

Անհիմն մեղադրանքի դեպքում ամբաստանյալի պաշտպանության գործիքն անմեղության կանխավարկածն է: Թեև անմեղության կանխա վարկածը վերաբերում է բոլորին, անչափահասի սխալ մեղադրանքի հետևանքները կարող են բացասական ազդեցություն ունենալ անչափահասի հետագա զարգացման և կայացման վրա: Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պետք է խստագույնս պահպանեն անմեղության կանխավարկածի սկզբունքը և մեղադրանք առաջադրելիս հաշվի առնեն անչափահասի հատուկ կարգավիճակը

Ըստ ԵԻԿ-ի՝ պետական մարմինները պետք է տեղեկատվություն տրամադրեն երեխայի զարգացման պայմանների մասին, որպեսզի իրականում երաշխավորվի անմեղության կանխավարկածի պահպանումը: Երեխայի զարգացման պայմանների և հանգամանքների մասին տեղեկատվությունը կարևոր է յուրաքանչյուր ամբաստանյալի անձի անհատական վերլուծության, ինչպես նաև պատժի նշանակման համար, եթե անչափահասը մեղավոր է: Դատավարության և նրա հետևանքների ըմբռնման բացակայությունը, անձի հասուն չլինելը, վախը, ցուցադրական պաշտպանական խիզախությունը կամ այլ գործոններ կարող են պատճառ դառնալ անչափահասի վարքագծի այնպիսի դրսևորման, որն անհարիր է հասուն մարդուն և կարող է թյուր ըմբռնվել արդարադատություն իրականացնող անձանց կողմից: ՀՀ օրենսդրությունը վերահաստատում է անմեղության կանխավարկածի երաշխավորումը, արգելում ապացուցման բեռը դնել պաշտպանության կողմի վրա և պահանջում է ցանկացած չփարատված կասկած մեկնաբանել հոգուտ մեղադրյալի:

### **Առաջարկություններ.**

- ✓ Կրճատել կալանավորման՝ որպես խափանման միջոցի, ինչպես նաև ազատազրկման ձևով նշանակված պատժի չափից ավելի օգտագործումը և տևողությունը՝ քննարկելով նաև նոր այլընտրանքային միջոցների ստեղծումը:
- ✓ Ստեղծել իրավական և դատավարական նոր ընթացակարգեր՝ ուղղված անչափահասներին կառուցողական ինտեգրմանը հասարակությանը, այլ ոչ թե հանցագործությունների բացահայտմանը և պատժիչ քաղաքականությանը:
- ✓ Նախատեսել այլընտրանքային համայնքային միջոցներ՝ արդարադատության պաշտոնական ընթացակարգերի փոխարեն (ներառյալ՝ մեղիացիա և քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինում՝ հստակեցնելով այս առումով ուստիկանության, քննիչների, դատախազների և դատարանների դերը):
- ✓ Մասնագիտացնել անչափահասների գործերը քննող դատավորներին, դատախազներին, քննիչներին, ուստիկանության աշխատակիցներին և հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններին:
- ✓ Աջակցել Փաստաբանների պալատին՝ մասնավոր փաստաբանների համար անչափահասների արդարադատության հատուկ դասընթացներ կազմակերպելու գործում:
- ✓ Երաշխավորել երեխայի իրավունքների և լավագույն փորձի վերաբերյալ թեմաների պաշտոնական ներմուծումը մասնագետների կրթության և աշխատանքի վայրում անցկացվող վերապատրաստման դասընթացների ծրագրերում, ապահովել կրկնվող, կայուն և հետևողական դասընթացներ:
- ✓ Դատավորի կողմից անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը պետք է հիմք հանդիսանա՝ (1) դատավորի պարտադիր ինքնաբացարկման, (2) եթե այդ դատավորը հրաժարվում է ինքնաբացարկումից, դատավճիռը չեղյալ համարելու, (3) դատավորների վրա կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար: